ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N << ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-15-1-15/21>>

ք. Երևան <<11>> հունվարի 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Վ.Գզրարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և նախատեսված ժամկետներում՝ Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրիր- գնման ժամանակացույցով նախատեսված հատուկ նշանակության ավտոմեքենաներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 1 հավելվածով՝ սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

3.1.8 Ձննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/

պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ **126 500 000 (Մեկ հարյուր քսանվեց միլիոն հինգ հարյուր հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի միավոր գները սահմանված են սույն Պայմանագրի N 1 հավելվածում:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդը իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի 9.2 կետով նախատեսված կնքվելիք համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներում:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2 Ապրանքի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են սույն պայմանագրի N 1 Հավելվածում:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 2) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 2.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կնքվի համաձայնագիր:*

այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված Ապրանքների մատակարարումը իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Սույն պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքվելու օրվան հաջորդող տարվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ

գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գնորդ	**Վաճառող**
ՀՀ ֆինանսների նախարարություն	«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ
ք. Երևան, Մ.Ադամյան-1	ք.Երևան, Արարատյան-117/1
ՀՀ ֆինանսների նախարարության	«Ամերիաբանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	
Հ/Հ 900013202016, 900013574018	Հ/Հ 1570003667300100
ՀՎՀՀ 02629081	ՀՎՀՀ 01557589
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝	«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն՝
Վ.Պողոսյան	**Վ.Գրիգորյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված N 1
«11» հունվար 2015 թ. կնքված
N ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-15-1-15/21 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի*									
չ/հ	անվանում	տեխնիկական բնութագիր	չ/մ	քանակ	միավորի գինը	ընդամենը	երաշխիքային ժամկետ	հետերաշխիքային սպասարկում	Մատակարարման ամսաթիվ և ընդունող կազմակերպություն
1	Հատուկ նշանակության մասնագիտացված մեքենա /մարդատար/՝ Toyota Camry 2.5L GAS	Չշահագործված, թողարկման տարեթիվը 2015թ, առավելագույն վազքը չի կարող գերազանցել 100կմ, թափքի տեսակը՝ սեդան, գույնը՝ սև, երկարությունը՝ 4850մմ, լայնությունը՝ 1825մմ, բարձրությունը՝ 1480մմ, շարժիչը՝ 4 գլանային շարային, բենզինային՝ Dual VVT-i, շարժիչի աշխատանքային ծավալը 2.5լ, շարժիչի հզորությունը՝ 181 Ձ/ՈՒ, EURO 4, փոխանցման տուփը՝ ավտոմատ-տիպտրոնիկ 6 աստիճան, անվահեծերը՝ թեթեվածույլ ալյումինե 215/60R16 վառելիքի ծախսը՝ 100կմ համար՝ 5.9-11լ, Անվտանգության ABS (արգելակների ապաբլոկավորման համակարգ), VSC(կուրսային կայունության համակարգ), EBD, (արգելակման ուժի բաշխման համակարգ), Brake Assist (շտապ արգելակման համակարգ), 8 հատ անվտանգության բարձիկներ, հակամշուշային առջևի և հետևի լուսարձակներ, կենտրոնական փական հեռակառավարմամբ, կլիմատ կոնտրոլ 3-գոտի, բորտ համակարգիչ, բոլոր ապակիները էլեկտրակառավարվող, արտաքին հայելիները էլեկտրակառավարվող և տաքացվող, լուսադիոդային ցերեկային լույսեր, բազմաֆունկցիոնալ ղեկանիվ, AM/FM/CD/ Bluetooth աուդիոհամակարգ՝ 6 բարձրախոսներով, USB/AUX մուտքերով, կրույզ կոնտրոլ համակարգ, սենսորային մոնիտոր հետադարձ տեսախցիկով, էլեկտրական լյուկ, լուսարձակները քսենոնային և ադապտիվ, լույսի և անձրևի սենսորներ, շարժիչի մեկնարկումը կոճակի օգնությամբ, սրահի ձևավորումը փայտ և կաշի, առջևի և հետևի կայանման սենսորներ, առջևի և հետևի	հատ	4	15600000	62400000	ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 36 ամիս կամ 100000 կմ	Երաշխիքային սպասարկման ժամկետի ավարտից հետո 66 ամիս հետերաշխիքային սպասարկում տվյալ պահին Վաճառողի մոտ գործող գներից 5% զեղչով, ներառյալ սպասարկման համար անհրաժեշտ պահեստամասերը	Մատակարարումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 31-րդ աշխատանքային օրը: ՀՀ ՖՆ ք. Երևան, Մ. Խորենացու 3

		նստատեղերը էկեկտրակառավարմամբ և տաքացվող, հետևի դիմապակու վարագույր՝ էլեկտրակառավարմամբ, լուսարձակները լվացվող, սարքավորված՝ ձայնային և բարձրախոսային համակարգով, դիմացից լուսադիոդային գունավոր լուսարձակներով, ռադիոկապով, լուսադիոդային շարժական լուսատուներով՝ լիցքավորելու հնարավորությամբ, լրացուցիչ վարդակներով, քաշը 1540կգ, լուսածերպը ավելացված 30մմ-ով, դիմացից և հետևից լրացուցիչ պաշտպանիչ խողովակներով ամրացնելու հնարավորությամբ, հետևի նստատեղերը ծալվող, բեռնախցիկի հատակը ռետինեպատ:							
2	Հատուկ նշանակության մասնագիտացված մեքենա ամենագնաց /5 տեղանոց/՝ Toyota RAV4 2.5 L GAS	Չշահագործված, թողարկման տարեթիվը 2015թ, առավելագույն վազքը 7կմ, թափքի տեսակը՝ ամենագնաց, գույնը՝ սև, երկարությունը՝ 4570մմ, լայնությունը՝ 1845մմ, բարձրությունը՝ 1670մմ շարժիչը՝ բենզինային՝ շարժիչի աշխատանքային ծավալը 2.5լ, 4 գլանային, շարժիչի հզորությունը՝ 180 Ձ/ՈՒ, փոխանցման տուփը՝ ավտոմատ-տիպտրոնիկ 6 աստիճան, անվահեծերը՝ թեթեվածույլ ալյումինե 265/65R-17 վառելիքի ծախսը՝ 100կմ համար՝ 6.8-11լ, Անվտանգության ABS (արգելակների ապաբլոկավորման համակարգ), VSC HAC (անիվների հակատեղապտուտային, կուրսային կայունության, բարձունք հաղթահարելու համար օժանդակ), 9 հատ անվտանգության բարձիկներ, հակամշուշային առջևի և հետևի լուսարձակներ, ESP էլեկտրական ղեկային ուժեղացման համակարգ, կենտրոնական փական հեռակառավարմամբ, 2-գոտի կլիմատ կոնտրոլ, կրուիզ կոնտրոլ, բորտ համակարգիչ, բոլոր ապակիները էլեկտրակառավարվող, արտաքին հայելիները էլեկտրակառավարվող և տաքացվող, լուսադիոդային ցերեկային լույսեր, ինտերակտիվ բազմաֆունկցիոնալ ղեկանիվ, AM/FM/CD/ Bluetooth աուդիոհամակարգ՝ 6 բարձրախոսներով, USB/AUX մուտքերով, կրույզ կոնտրոլ համակարգ, սենսորային մոնիտոր հետադարձ տեսախցիկով, էլեկտրական լյուկ, բեռնախցիկի դուռը էլեկտրակառավարմամբ, լույսի և անձրևի սենսորներ, շարժիչի մեկնարկումը կոճակի օգնությամբ, սրահը կաշեպատ, առջևի և հետևի կայանման սենսորներ, առջևի նստատեղերը էկեկտրակառավարմամբ և տաքացվող, բեռնախցիկը սարքավորված՝ ձայնային և բարձրախոսային համակարգով, ռադիոկապով, լուսադիոդային շարժական լուսատուներով՝ լիցքավորելու հնարավորությամբ, լրացուցիչ	հատ	2	19400000	38800000	ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 36 ամիս կամ 100000 կմ	Երաշխիքային սպասարկման ժամկետի ավարտից հետո 66 ամիս հետերաշխիքային սպասարկում տվյալ պահին Վաճառողի մոտ գործող գներից 5% զեղչով, ներառյալ սպասարկման համար անհրաժեշտ պահեստամասերը	Մատակարարումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 31-րդ աշխատանքային օրը: ՀՀ ՖՆ ք. Երևան, Մ. Խորենացու 3

		վարդակներով, քաշը 2110կգ, դիմացից և հետևից լրացուցիչ պաշտպանիչ խողովակներով ամրացնելու հնարավորությամբ, հիդրավլիկ բեռնաքարշակ համակարգ ամրացնելու հնարավորությամբ, լուսածերպը ավելացված 50մմ-ով, բեռնախցիկի ծավալը 506լիտր, լրացուցիչ բենզինի բակով, ցանցապատ արկղերով շներին տեղափոխելու համար՝ ամրացնելու հնարավորություն, բեռնախցիկի հատակը ռետինեպատ օդափոխության համակարգ, թափքի պաշտպանիչ վահանակներ, լիաչափ պահեստային անվադող:							
3	Հատուկ նշանակության մասնագիտացված մեքենա ամենագնաց /7 տեղանոց/ Toyota Prado 4.0L GAS	Չշահագործված, թողարկման տարեթիվը 2015թ, առավելագույն վազքը 7կմ, թափքի տեսակը՝ ամենագնաց, գույնը՝ սև, երկարությունը՝ 4780մմ, լայնությունը՝ 1885մմ, բարձրությունը՝ 1890մմ, շարժիչը՝ բենզինային՝ շարժիչի աշխատանքային ծավալը 4.0լ, 6 գլանային Dual VVT-I, շարժիչի հզորությունը՝ 282 Ձ/ՈՒ, փոխանցման տուփը՝ ավտոմատ-տիպտրոնիկ 5 աստիճան, անվահեծերը՝ թեթեվածույլ ալյումինե 265/60R-18, վառելիքի ծախսը՝ 100կմ համար՝ 8.6-14.7 լիտր, միջլիսեռային դիֆերենցիալ բլոկավորումով, մշտական լիաքարշակ համակարգ-իջեցնող փոխանցումաշարքով, Անվտանգության ABS (արգելակների ապաբլոկավորման), VSC, HAC, DAC, TRC (անիվների հակատեղապտույտային) համակարգեր, 9 հատ անվտանգության բարձիկներ, հակամշուշային առջևի և հետևի լուսարձակներ, լուսարձակները քսենոնային և ադապտիվ, էլեկտրական ղեկային ուժեղացման համակարգ, կենտրոնական փական հեռակառավարմամբ, 3-գոտի կլիմատ կոնտրոլ, բորտ համակարգիչ, բոլոր ապակիները էլեկտրակառավարվող, արտաքին հայելիները էլեկտրակառավարվող և տաքացվող, լուսադիոդային ցերեկային լույսեր, բազմաֆունկցիոնալ ղեկանիվ, AM/FM/CD աուդիոհամակարգ՝ 6 բարձրախոսներով, USB/AUX մուտքերով, քրույզ կոնտրոլ համակարգ, մոնիտոր հետադարձ տեսախցիկով, լույսի և անձրևի սենսորներ, շարժիչի մեկնարկումը կոճակի օգնությամբ, սրահը թավշյա, առջևի և հետևի կայանման սենսորներ, առջևի նստատեղերը էկեկտրակառավարմամբ, բեռնախցիկը սարքավորված՝ ձայնային և բարձրախոսային համակարգով, ռադիոկապով, լրացուցիչ ծալովի 2 նստատեղերով, աշխատանքային ծալովի սեղանով, լուսադիոդային շարժական լուսատուներով՝	հատ	1	25300000	25300000	ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 36 ամիս կամ 100000 կմ	Երաշխիքային սպասարկման ժամկետի ավարտից հետո 66 ամիս հետերաշխիքային սպասարկում տվյալ պահին Վաճառողի մոտ գործող գներից 5% զեղչով, ներառյալ սպասարկման համար անհրաժեշտ պահետամասերը	Մատակարարումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 31-րդ աշխատանքային օրը: ՀՀ ՖՆ ք. Երևան, Մ. Խորենացու 3

		լիցքավորելու հնարավորությամբ, լրացուցիչ վարդակներով, քաշը 2900կգ, լուսածերպը ավելացված 50մմ-ով ,դիմացից և հետևից լրացուցիչ պաշտպանիչ խողովակներով, հնարավորություն ամրացնել հիդրավլիկ բեռնաքարշակ համակարգ, սառնարան, լրացուցիչ բենզինի բակով, ցանցապատ արկղերով շներին տեղափոխելու համար՝ ամրացնելու հնարավորություն, բեռնախցիկի հատակը ռետինեպատ, օդափոխության համակարգ, թափքի պաշտպանիչ վահանակներ, լիաչափ պահեստային անվադող:							

**Ապրանքը պետք է լինի չօգտագործված:

****Սույն տեխնիկական բնութագրով ավտոմեքենաները պատկանում են հատուկ նշանակության ավտոմեքենաների դասին և նախատեսված են մարզերում տեղակայված տարածքային հարկային տեսչություններում, սահմանային մաքսատներում և մաքսակետերում օպերատիվ հետախուզության ծառայությունների մատուցման, ինչպես նաև մաքսանենգության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլ հանցագործությունների, ՀՀ մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխմանը վերաբերող մասով ՀՀ օրենսդրության այլ խախտումների դեմ պայքարի, ՀՀ մաքսային սահմանով թմրամիջոցների, զենքի, մշակութային և այլ ապարանքների ապօրինի տեղափոխման կանխարգելմանը:

Գնորդ
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ.Ադամյան-1
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013202016, 900013574018
ՀՎՀՀ 02629081
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝
Ա.Աղջումանյան
(ստորագրություն)

Վաճառող
«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ
ք.Երևան, Արարատյան-117/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570003667300100
ՀՎՀՀ 01557589
«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ»-ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն՝
Վ.Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
«11» հունվար 2015թ. կնքված
N ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-15-1-15/21 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
«11» հունվար 2015թ. կնքված
N ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-15-1-15/21 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն